

# ԴԺՎԱՐ Է ԼԻՆԵԼ ՀԱՍԵՍՏ, ԵՐԲ ԴՈՒ ՈՒԺԵՂԱԳՈՒՅՆՆ ԵՍ, ԵՐԲ ՄԻ ՈՂՋ ԱԶԳԻ ՀՊԱՐՏՈՒԹՅՈՒՆՆ ԵՍ. ԱՅԴՊԻՍԻՆՆ Է ՆԱ

Դժվար է լինել համեստ, երբ դու ուժեղագույնն ես, երբ մի ողջ ազգի հպարտությունն ես ու լավագույնը: Հենց այդպիսինն է իմ գրուցակիցը՝ Օլիմպիական խաղերի փոխչեմպիոն, եվրոպայի և աշխարհի կրկնակի չեմպիոն, ռեկորդակիր Սիմոն Մարտիրոսյանը՝ համեստ, ուժեղ, մի ողջ ազգի պարծանք: Նրան բոլորը գիտեն՝ անկախ սեռից, տարիքից ու մասնագիտությունից:



Նրա համար ծանրամարտը ապրելակերպ է, կյանքի անբաժան ու կարևորագույն մաս: Օրերս Ս. Մարտիրոսյանը Արցախում էր և, առիթն օգտագործելով, գրուցեցիմք նրա հետ սպորտի և հետաքրքրող այլ հարցերի շուրջ:

**-Սիմոն, ինչպե՞ս և ե՞րբ եք ընտրել սպորտն ու ծանրամարտը:**

-Առաջին քայլերը դեպի սպորտ եղել է 11 տարեկանում. սկզբում բռնցքամարտով եմ զբաղվել՝ էջմիածնում, իսկ որոշ ժամանակ հետո սկսել եմ մասնակցել ծանրամարտի պարապմունքներին. գնացել եմ ու սիրահարվել այդ սպորտաձևին: Մնացել եմ այնտեղ մինչև հիմա: Եթե անցյալ վերադառնայի, կամ ժամանակի անհիվը հետ պտտել ստացվեր, միանշանակ նորից ծանրամարտը կընտրեի, որովհետև այն իմն է և վերջ:

**-Պարապմունքների սկզբում մնան հաջողություններ պատկերացնո՞ւմ էիք:**

-Ծիշտն ասած պատկերացում չեմ ունեցել, որ ասպիսի հաջողություններ կունենամ, բայց միանշանակ, չկա այդպիսի գիմվոր, որ չցանկանա գեներալ դառնալ: Ծիշտ է, փոքր տարիքում ծանրամարտի գնացել եմ ուղղակի առողջ ապրելակերպի ու զեղեցիկ կազմվածքի համար, բայց հետո արդեն ամեն ինչ ինքն իրեն ստացվեց:

**-Ի՞նչ սպասել Օլիմպիական խաղերի փոխչեմպիոն, Աշխարհի և Եվրոպայի կրկնակի չեմպիոն, ռեկորդակիր Սիմոն Մարտիրոսյանից կայանալիք Օլիմպիական խաղերից:**

-Կզմամ ու հետ կզամ, բայց անպայման մեդալով, և միանշանակ մեդալի գույնը շատ կարևոր է. ինչքան փայլուն, այնքան ավելի լավ: Գնում եմք ոսկու համար, իսկ թե ինչպես կստացվի, դա էլ մրցումները ցույց կտան:

**-Ապագայում ինչպիսի՞ն կլինի ծանրամարտիկ Սիմոն Մարտիրոսյանի խորհուրդը իր երեխային, եթե նա ընտրի նույն սպորտաձևը:**

-Սեռը կարևոր է. եթե տղա լինի, կողմ կլինեմ, որովհետև այս սպորտաձևը ինձ շատ բան է տվել. թե՛ ապրելակերպ, թե՛ նոր շրջապատ, թե՛ հետաքրքիր հիշողություններ, ամեն ինչ տվել է ինձ, և ես շատ շնորհակալ եմ ծանրամարտին ու կուզեմայի, որ իմ որդին շարունակի իմ ճանապարհով: Բայց իմ աղջիկ երեխային հաստատ չեմ տա ծանրամարտի, որովհետև այն տղամարդու սպորտաձև է, ոչ թե կանացի:

**-Բազմաթիվ մեդալներից ու հաղթանակներից հետո, հետաքրքիր է, հայ մարզիկն ինքն իրեն հաջողակ համարո՞ւմ է, թե՛ ոչ:**

-Որոշ չափով այո, հաջողակ համարում եմ, և հաջողության հասնելու համար պետք է լինել նպատակասլաց, լսել մարզչին, ու ամեն ինչ գիտակցաբար անել:

**- Եվ որպես հարցազրույցի վերջաբան՝ Սիմոն Մարտիրոսյանի խորհուրդը նրանց, ովքեր նոր են սկսել զբաղվել ծանրամարտով:**

-Սկսնակներին խորհուրդ կտամ լավ սովորել, լսել մարզիչներին, ծնողներին և հստակ գիտակցեն, թե ինչ են ուզում:

**-Նորանոր հաղթանակներ ու հաջողություններ են մտադրում Ձեզ:**

-Շնորհակալություն:

**Հարցազրույցը՝ ԱՆՆԱ ԱՀԱՐՈՆՅԱՆԻ, Լրագրություն, 4-րդ կուրս**



# ՔՈ ԺԱՄԱՆԱԿԸ

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ

## ԱՐՊՅ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆ ՈՒՍՈՒՑՉԻ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ

Հոկտեմբերի 5-ը աշխարհի ավելի քան 100 երկրում, այդ թվում նաև Հայաստանում և Արցախում, մշտն էն Ուսուցչի համաշխարհային օրը: 1994թ.-ին ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից հոկտեմբերի 5-ը հռչակվել է ուսուցչի և ամբողջ կրթական ոլորտում աշխատողների մասնագիտական օր: Օրվա առթիվ շնորհավորում են ԱրՊՅ ուսանողները:



Սիրելի մանկավարժներ, ջերմորեն շնորհավորում են ձեզ՝ ուսուցչի տոն օրվա կապակցությամբ: Դուք ձեր անմնացորդ նվիրվածությամբ կատարում եք այնպիսի վերերկրային առաքելություն, որ բառերով անհնար է նկարագրել: Մաղթում են անձնական հարատև երջանկություն, մանկավարժական գործունեության արդյունավետություն, ծով համբերություն, սեր և երկար տարիների բեղմնավոր գործունեություն: Անչափ շնորհակալ ենք ձեր կատարած աշխատանքի, գիտելիքների աշխարհում ձեր սաներին ճիշտ ուղղորդելու և մեր հասուն կյանքի հիմքը կառուցելու համար:



**Լիլիթ ՄԱՐԳԱՐՅԱՆ, ԱրՊՅ ՈՒՍ Անխագահ**

Մեր դարավոր պատմության ընթացքում ուսուցիչը միշտ էլ ամենապատվավոր ու հարգալից տեղն է զբաղեցրել հասարակության կյանքում: Սրտանց շնորհավորում են կրթության և դաստիարակության բնագավառում աշխատած ու աշխատող բոլոր ուսուցիչներին ու մանկավարժներին: Ձեր մասնագիտական տոնը իսկապես դարձավ համաժողովրդական: Այս նշանակալից օրը մենք խորը ակնածանքով և երախտագիտությամբ ենք մոտենում ձեր կատարած նվիրական աշխատանքին: Շնորհակալ ենք ձեզ, որ մեզ տալիս եք բազմակողմանի գիտելիքներ, պատրաստել ու պատրաստում եք ինքնուրույն կյանքին, կյանքի դասեր եք հաղորդում մեզ: Դուք ձեր իմաստությամբ ամեն օր բացահայտում եք մի նոր լավի ու վատի, չարի ու բարու խորհուրդ: Ձեզ մաղթում ենք նորանոր հաջողություններ, թող ձեր երթը մշտադալար լինի:



**Մարտա ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Լրագրություն 2-րդ կուրս**

**«Քո ժամանակը»**

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ

Տպարանակ՝ 400  
Տպագրվում է Արցախի պետական համալսարանի հրատարակչության տպարանում  
Մեր հասցեն՝ Մ.Գրչի 5: 7եռ.՝ (047) 94 04 91

Խմբագիր՝ Զ.ՍԱՌԱԶՅԱՆ  
Համարի պատասխանատու՝ Մանե Գաբրիելյան, Լրագրություն 3-րդ կուրս



Ի սրտե շնորհավորում եմ բոլոր ուսուցիչներին, դասախոսներին և ուսումնական ոլորտում ներգրավված բոլոր անձանց այս գեղեցիկ տոնի կապակցությամբ: Ձեր ամուր նյարդերի, չխնայված ծիզ ու ջանքերի շնորհիվ է կերտվում մեր երկրի փայլուն ապագան: Ձեր վարած ուսումնադաստիարակչական ու գիտաճանաչողական գործունեությունն է հիմք ծառայում այսօրվա սերնդի աշխարհայացքի ու գիտական մտքի ձևավորման համար:

Մաղթում եմ ձեզ անսահման համբերություն, մտքի ճկունություն, երկաթի պես ամուր առողջություն:

**Սաթենիկ ԴԱԴԱՅԱՆ, մաթեմատիկա 3-րդ կուրս**

\*\*\*

Ի սրտե շնորհավորում եմ Ձեր մասնագիտական տոն օրվա առթիվ, մասնագիտություն, որը բոլոր մասնագիտություններին առավել է: Շնորհակալություն եմ ու-

զում հայտնել բոլոր նրանց, ովքեր ամենայն պատասխանատվությամբ են մոտենում ուսուցչի վեհ աշխատանքին, շնորհակալ եմք ձեզ մեզ իմաստություններ սնելու, մեզ կրթելու և դաստիարակելու համար, կրթության և գիտելիքի կարևորության դերը մեր մեջ արմատավորելու համար: Յուրաքանչյուր հաջողության հասած մարդ պարտական է իր ուսուցիչին, քա-



նի որ նրա բազմաչարչար աշխատանքի շնորհիվ է ձեռք բերել այն գիտելիքները և մարդկային հատկանիշները, որոնք պետք եկան այդ բարձունքին հասնելու համար...

Մաղթում եմ ուժ, եռանդ ձեր տքնաջան ու դժվարագույն աշխատանքում, նորանոր հաջողություններ ինչպես անձնական կյանքում, այնպես էլ աշխատանքում, իսկ ուսուցչի հաջողությունը իր աշակերտի հաջողության մեջ է, ուսու-

ցիչը երջանիկ է այն ժամանակ, երբ իր աշակերտը կյանքում նորանոր հաջողությունների է հասնում:

**Ալիսիա ԴԱԴԱՅԱՆ, մաթեմատիկա 3-րդ կուրս**

\*\*\*

Դուք այնքա՛ն ուժ ու եռանդ եք ներդնում ձեր գործի մեջ, որ, կարելի է ասել, երբեմն հարազատներից խլում եք ձեր ուշադրության մի մասը՝ այն նվիրելով մեզ, ձեր ուսանողներին, աշակերտներին: Ձե՛ր ջանքերով է, որ աշխարհն օրեցօր դառնում է ավելի գրագետ ու բանիմաց, ավելի լուսավոր:

Թող ներքին ոգևորությամբ սկսվի ձեր նոր բացվող յուրաքանչյուր օրը, գիտելիքների մեծ աշխարհի դռները մեր առջև բացող, մեր բարի և իմաստուն խորհրդատուներ, եղեք երջանիկ:



**Ինեսսա Մայիլյան, լրագրություն 1-ին կուրս**

## ԱՐՑԱԽՈՒՄ ՀԵՐՈՍ ԵՆ ՆԱԵՎ ՆՐԱՆՔ, ՈՎՔԵՐ ԱՄՈՒՐ ՀԱՎԱՏՈՎ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ԽԱՂԱԴՈՒԹՅԱՆ ԵՆ ՄՊԱՍՈՒՄ...



**Փետրվարյան այդ օրը զոհվածների հիշատակին հուշարձանին ծաղիկներ խոնարհեցի: Շուրջս լռություն էր, միայն աղաղակ, հանգիստ, խաղաղ էր երկինքը, բայց և թախ-**

**ծոտ էին անցած օրերի հիշողություններ, որ երերող մտքերս ինձ առաջ մղեցին, ու ես Հայկուհի տատի թոնրատուն մտա. Արցախյան շարժման ակամատես էի փնտրում: Հայկարամ պապը, ոտքից կաղալով, մեկիկ-մեկիկ քայլերով մոտեցավ թոնրին, ցախ գցեց, և կրակը բոցավառվեց: Նա աչքը հառեց կրակին, և բոցկլտաց սիրտը կիզված: Հայկուհի տատը ազգային երգի թախծալից մի քանի տողեր մըմնջաց և իր ձեռքում լավաշը պտտեցրեց: Նա թոնրի պատին կպրեց, հետո կամաց լավաշները թոնրից հանեց, իրար վրա դարսեց:**

Ձեռքերս ալյուրով շաղախված՝ Հայկարամ պապին էի լսում, երբ հարազատ «1988 թվականն էր, փետրվար... Մի փոքրիկ երկիր առյուծի պես սկսեց դիմակայել, որ իր ինքնության ճանաչումը անկախ հռչակվի, Մայր Հայաստանին վերամիավորվի: Բազմաթիվ մտավորականներ ձեռք մեկնեցին արցախահայությանը և միահամուռ նպաստեցին արցախյան հարցի բարձրացմանը... Ցույցեր կազմակերպվեցին, արցախցին «մի՛-ա՛-ցու՛մ» վանկարկեց, երկունդն դիրքով բռնեց բարձրացրեց և Արցախի անկախությունը պահանջեց: Նոր մտաշրջան, որտեղ կայացվում էր Արցախը Մայր Հայաստանին վերամիավորելու որոշումը: Ադրբեջանը հրաժարվեց նպաստել արցախահայության դարավոր ցանկությանը, ու սկսվեցին Սուճալիթի, Բաքվի կոտորածները: Եվ, ի վերջո, 92-ի սեպտեմբերին Արցախը խորթ մորից բաժանվեց և անկախ հանրապետություն հռչակվեց»:


Պապը հոգոց հանեց, աչքի կիզակետից անցյալը հեռացավ, և նա նկատեց, որ կրակը մարել է: Ժամանակն էր թոնրատնից լավաշները տուն տանելու: Ես օգնում էի նրանց, և սանդուղքով բարձրանալիս Հայկարամ պապի վերջին բառերն էին մտքիս թելը պարուրել. «Արցախյան շարժումն սկսվեց խորթ մորից հեռանալու և հարազատ մորը միանալու համար, այն հասցրեց Արցախյան գոյամարտի, որտեղ համայն հայությունը ոտքի կանգնեց, նույնիսկ պատանի, թե հասակն առած հայորդիները պայքարի վճռականությամբ քանդեցին վրեժի կծիկը և ազատագրեցին հայրենի հողը»: Ներս մտանք: Հայկարամ պապը մտտեց թախտին, իսկ դիմացը հացի սեղանն էր... Նրա մատները կորցրին իրենց տիրապետումը, երբ դաշմանուրի ստեղծներին ուժգնությամբ հարվածեց: Նա ելևէջներ հյուսեց, որոնք անցած պատերազմական օրերի արտացոլանքն էին: Ցավը կիզում էր ներսից, բառերով չէր կարողանում խոսել, երբ անվասայլակին էր գամվել հրետակոծությունից հետո: Սրտի խորքից բխող վերջին զարկի հետ

արցունքները հոսեցին, Հայկուհի տատը մոտեցավ, սրբեց դստեր արցունքները: Հայկարամ պապի սիրտը ցավից կծկվեց, այլևս չէր ուզում խոսել: Վեր կացավ, իջավ նկուղ, որ մենակ մնա և ցավը սրտում սեղմի: Ես ծածուկ քայլերով մոտեցա դռանը և անցքից նայեցի: Փոքրիկ արվեստանոց էր: Հայկարամ պապի ձեռքերը կամաց սահում էին զոհված որդու անավարտ քանդակով: Մանկուց լսել էի, որ մայրս իմ տարիքին էր, երբ բնօրրանը թողել, հեռուներն էր գնացել: Այդժամ Արցախյան շարժումն էր, հետո՝ պատերազմ... Բազմերազ վիրավոր պատանիներ, նրանց ծաղկող մտքերի անկում... Հոռետեսության երանգն անհետացել, լավատեսության երանգապնակն էր ամրացել, երբ հայ քաջորդիներն էին ձեռք մեկնել զենքին, գունդ կազմել, որ գոյամարտում Արցախն ազատագրեն: Հաղթանակի ավետաբերով ու տարիներով ամրագրված մեծ ցնծություն էր իմ երկրում, բայց ապրիլյան այն օրը, որին սպասում էինք ծաղկի բույրով, աղավնու ճախրանքով, բացվեց թշնամու հարձակմամբ: Քառօրյա պատերազմը մոր սրտի զարկի հունը փոխեց, վերստին երկյուղով լցրեց, բայց հայ զինվորն արիաբար իր զորությունը դարձյալ գործադրեց, որ մոր սրտին հանգստություն, Արցախին խաղաղություն բերի: Ես այդ օրերին դողացող ձեռքով իմ ապրած կյանքի անձայնելի պահը գրչի հարվածով հանձնեցի թղթի մի փոքրիկ կտորի: Փոքր էր այն, բայց խոսքերս այնքան մեծ էին, որ ցրտից ճաքած շրթունքներս մըմնջացին, սարսափի ուժով խոսեցին բառերով, որոնք խաղաղությամբ մնջում էին մինչ այդ խավարչտին գիշերը: «Այս ապրիլյան օրը ես թևեր եմ փնտրում, որ ճախրեն, բայց մայր հողից այն կողմ չանցնեմ: Ես զենք եմ փնտրում, որ սահմանին հասնեմ, հույս եմ փնտրում, որ կարողանամ ահասարսուռ մտքերից ձերբազատվեմ: Եվ առ Աստված աղոթք եմ հնչեցնում, որ երկինքը ջիմջ լինի, Արցախիս սահմանը՝ պաշտպանված»: Ապրիլյան օրեր եմ տեսել, բայց երբեք հավատս չի մարել, երբևէ չեմ մտածել օտարտի դառնալու, այլուր մնալու և հողս այլոց թողնելու մասին, երբ այստեղ սահմանին կանգնած զինվորը երկյուղը վրասուց մոռացել, դիմակայել է սովորում: Արցախում հերոս սոսկ սահմանապահին չեն անվանում, այստեղ հերոս են նրանք, ում ականջներին դղրդյուն է հասնում, ում սիրտը պայթում և կրկին մոր զարկ է առնում, երբ թշնամու արծակած գնդակը «թիրախին» է հասնում...

Ամեն բացվող օր Արցախում երազի թևերով և խաղաղության ակնկալիքով եմ դիմավորում: Նայում եմ հեռուն և փնտրում այն ուղին, որ տանում է դեպի հասկաբեր դաշտերը, ուր խաղաղ է այգաբացը, գերող է թռչունների ծվլոցը, հոր և որդու քրտնաջան աշխատանքը, նրանց հաց ու պանիր հասցնող աղջնակի բարի ժպիտը: Տեսա՛ ինչպես է տատն իր հին աղորիքը բանեցնում, պապը թոնրին է վառում, մոր ձեռքով խմոր է հունցվում: Նայում եմ նրանց աչքերին, տեսնում մաշտոցյան տառերն անգին, նայում եմ նրանց ձեռքերին, տեսնում թափուր զարկի, որ մի հարվածով մատյան են ստեղծում, ժողովրդի պատմությունն անմահացնում:

**Լուիզա ՄԱՍՈՒՆՑ, 7. լեզու և գրականություն 1-ին կուրս**

# ԹԱՏՐՈՆԸ ԿՅԱՆՔ Է, ՍԵՐ ԵՎ ԱՊՐՈՒՄ...



Արցախի պետական համալսարանի «Թարգմանչական գործ» 3-րդ կուրսում է սովորում Վարդինե Չայրապետյանը, ով, օժտված լինելով դերասանական տաղանդով, համատեղում է դերասանական աշխատանքն ու կրթությունը: Թատրոնը նրա համար կյանք է, սեր և ապրում... Վարդինեն տասնվեց տարեկանից ընդգրկված է Վահրամ Փափազյանի անվան պետական դրամատիկական թատրոնի դերասանական կազմում և իր կերտած դերերով արդեն հասցրել է սիրվել թատերասեր հանրության կողմից: Լրագրություն 3-րդ կուրսի ուսանողուհի Մանն Գարրիելյանը փորձել է բացահայտել նրան.

**- Վարդինե, ինչպե՞ս ստացվեց, որ սկսեցիր զբաղվել թատերական աշխատանքով և ո՞ր տարիքում:**

- Դեռևս դպրոցական տարիքում Ստեփանակերտի մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնում ես հաճախել եմ թատերական ստուդիա: Սակայն թատերարվեստում իմ կյանքի ամենակարևոր իրադարձություններից մեկն այն էր, որ տասնվեց տարեկան հասակում ինձ բախտ վիճակվեց ընդգրկվել Վահրամ Փափազյանի անվան պետական դրամատիկական թատրոնի դերասանական կազմում:

**- Ի՞նչ դերեր ես կերտել, և ո՞րն է ամենահարազատը քեզ համար:**

- Այս երեք տարիների ընթացքում ինձ բախտ է վիճակվել խաղալ բազում կերպարներ: Խաղացել եմ նաև գլխավոր կերպարներ: Բոլորն էլ ինձ հոգեհարազատ են եղել, քանի որ յուրաքանչյուր կերպար ապրել եմ, փորձել ընկալել նրա բնույթն ու էությունը: Բոլոր կերպարները յուրահատուկ են, սակայն կառանձնացնեն «Եվգենի Օնեգին» ներկայացման մեջ Օլգայի կերպարը, քանի որ այդ կերպարով մեկնարկեցին իմ հաջողությունները թատե-

րարվեստում:

**- Կա՞րողոք այնպիսի մի դեր, որը կցանկանայիր խաղալ:**

- Ծիշտն ասած դրա մասին երբևէ չեմ մտածել, քանի որ ես դեռ փորձում եմ կատարելագործվել ինձ տրված և վստահված դերերում:

**- Ի՞նչ զգացողություններ ես ունենում ամեն անգամ բեմ դուրս գալուց առաջ:**

- Հուզմունք, այդ զգացումը ակամայից գալիս է՝ մինչև բեմ մտնելը: Ասում են, երբ դերասանը մինչև ներկայացման սկսվելը չի զգում հուզմունք, ապա նրա հետ մի բան այն է: Այդ զգացողությունը բնական է, ուղղակի պետք է բեմ մտնելուց հետո ամեն ինչ թողնել ետնաբեմում...

**- Ի՞նչ է թատրոնը քեզ համար:**

- Թատրոնը կյանք է, սեր և ապրում...

**- Քանի որ և՛ աշխատում ես, և՛ սովորում, մեկը մյուսին չի՞ խանգարում:**

- Իհարկե կան դժվարություններ, բայց փորձում եմ ամեն գնով համատեղել և՛ աշխատանքը, և՛ ուսումը: Երկուսն էլ ինձ համար կարևոր նշանակություն ունեն, քանի որ երկու մասնագիտության առանցքում սերն է...

**- Ինչպե՞ս ես պատկերացում Արցախի թատրոնի ապագան:**

- Վստահորեն կարող եմ ասել, որ Արցախի մայր թատրոնն ունի լուսավոր ու պայծառ ապագա: Բոլոր ամեն ինչ անում ենք, որպեսզի Ստեփանակերտի միակ ու անկրկնելի թատրոնը նորից ունենա այն երբեմնի համբավը, որ ունեցել է...

**- Մինչև հիմա կերտած կերպարներից ո՞րն է առավելապես մոտ Վարդինե Չայրապետյան անձին:**

- Ես դեռ չեմ խաղացել այնպիսի կերպարներ, որ բնավորությամբ մոտ լինի իմ էությանը: Բայց կյանքը դեռ առջևում է և դեռ շատ կերպարներ կլինեն ու հուսով եմ, որ մի օր կխաղամ հենց Վարդինե Չայրապետյան կերպարը...

**- Քո խոսքը՝ թատերասեր հանդիսատեսին:**

- Քանի որ թատրոնը սեր է և ապրում, ինչպես նաև կենդանի արվեստ ու բոլոր ժամանակների համար արդիական, ես կուզենայի, որ այսօրվա հանդիսատեսը, հատկապես երիտասարդ հանդիսատեսը, սիրելով թատրոնը, միշտ ունենա իր հատուկ վերաբերմունքը թատրոնի և դերասանի հանդեպ, ըմբռնումով մոտենա յուրաքանչյուր կերպարին:

**Հարցազրույցը՝ Մանն ԳԱՐՐԻԵԼՅԱՆԻ, Լրագրություն 3-րդ կուրս**

# «ՈՒՍՈՒՑԻՉ» ԲԱՌԸ ՇԱՏ ՄԵԾ ԵՎ ԲԱՐՁՐ ԽՈՐՀՈՒՐԴ ՈՒՆԻ: ԱՐԺԱՆԻ ԵՂԵՔ ՁԵՐ ԿՈՉՄԱՆԸ



Արդ՞ բանասիրական ֆակուլտետի գրականության և լրագրության ամբիոնի դոցենտ, ք.գ.թ. Սիրունիկ Բաղդասարյանի գիտամակավարժական փորձը կեսդարյա պատմություն ունի: Ձեզ ենք ներկայացնում նրա հետ ունեցած մեր զրույցը, որը վերաբերում է մանկավարժի առաքելությանը, կոչմանը, ոլորտի խնդիրներին:

**- Տիկին Բաղդասարյան, Ձեր երկարամյա գիտամակավարժական փորձից ելնելով՝ ո՞րն եք համարում մանկավարժի առաքելությունը:**

- Մանկավարժի առաքելությունը բավականին դժվարին ու բարդ է: Եվ ամեն մի ուսուցիչ չէ, որ կարող է համարվել սուրբ Մաշտոցի գործի շարունակողն ու կրտսերագույն աշակերտը: Հասարակության բոլոր անդամները կյանք են մտնում ուսուցչի բարերար ազդեցությանը և մի տեսակ ակնածանքով են վերաբերվում նրա գործին, ինչն անչափ պարտավորեցնող է:

**- Կյանքը ցույց է տալիս, որ լավ մանկավարժը նաև պետք է հոգեբան լինի. այս առումով հետաքրքիր է լսել Ձեր կարծիքը:**

- Մանկավարժը հոգեբան լինելուց բացի, պետք է օժտված լինի նաև մարդկային շատ որակներով, քանի որ նա ոչ միայն խոսքով է սովորեցնում, այլև իր կենսակերպով: Նա ոչ միայն հոգեբանորեն պետք է ճանաչի իր առջև նստած սաներին, այլև հսկի նրանց միջամտման իրաբերությունները և ծիշտ ուղղորդի դրանք: Մարդկանց հետ հարաբերվելը ևս մշակույթ է, որը աշակերտների աչքի առաջ է և ոչ միայն այս հարցում, այլև շատ ու շատ հարցերում նրանց համար ու-

սուցիչն է առաջին ուղեցույցը և իդեալը:

**- Ձեր կարծիքով փոխվե՞լ է մանկավարժի կերպարը ժամանակակից փուլում, երբ նկատելի ձևափոխությունների են ենթարկվել ուսուցմանն ու դաստիարակությանը, կրթական համակարգին ներկայացվող պահանջները:**

- Անշուշտ, փոխվել են: Նախկինում ուսուցիչն անառարկելի հեղինակություն էր թե՛ երեխաների, թե՛ տան անդամների և թե՛ հասարակության մեջ: Ցավոք, այսօր նույնը չենք կարող պնդել: Օրինակ՝ ցավալի է, որ մանկավարժական բաժիններ քիչ դիմորդներ են դիմում, առանձնապես խուսափում են տղաները: Գաղտնիք չէ, որ մեր դպրոցներում տղամարդ ուսուցիչների թիվը զգալիորեն կրճատվել է, որը բացասաբար է անդրադառնում առանձնապես տղաների թե՛ դաստիարակության և թե՛ մասնագիտական կողմնորոշման հարցում: Եվ քանի որ մանկավարժի աշխատանքը բավականին բարդ է, շատերը երկնջում են և չեն ուզում ընկնել ավելորդ գլխացավանքի մեջ:

**- Ո՞րն է մանկավարժի Ձեր կարգախոսը, որն ուղեկցել է Ձեզ գիտամակավարժական գործունեության ամբողջ ընթացքում:**

- Իմ 50 տարվա մանկավարժական պրակտիկայից ելնելով կարծում եմ, որ ամենից առաջ անհունորեն պետք է սիրել նրան, ում ուսուցանում ես: Սիրել այն առարկան, որը դասավանդում ես և ամենայն պատասխանատվությամբ վերաբերվել քո առաքելությանը և, որ ամենակարևորն է, ամեն օր լրացնել քո գիտելիքների զինանոցը: Եթե մի հրաշքով իմ կյանքի անիվը հնարավոր լիներ ետ դարձնել, ես նորից կընտրեի մանկավարժի մասնագիտությունը:

**- Ի՞նչ կմաղթեիք Ձեր սաներին՝ ներկա և ապագա մանկավարժներին:**

- Բոլոր ուսուցիչներին ցանկանում եմ ծով համբերություն նրանց դժվարին աշխատանքում և անհուն սեր դեպի այս սրբազնագույն աշխատանքը, քանի որ «ուսուցիչ» բառը շատ մեծ և բարձր խորհուրդ ունի: Արժանի եղեք Ձեր կոչմանը:

**Հարցազրույցը՝ Նանն ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ Լրագրություն 3-րդ կուրս**

# ԱՐՑԱԽԻ ՄԱՅՐ ԲՈՒՅԻ ԳՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ ԳԱԳԵՑԱԾ Է ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐՈՎ



Այսօր ընդհանուր առմամբ հարցեր: Իսկ այն հարցին, թե ինչպիսի հեռանկարներ կան հրատարակչության գործունեությունը բարելավելու ուղղությամբ, Եղիշե Առուշանյանը պատասխանել է. «Հրատարակչությունում չկան այնպիսի խնդիրներ, որոնք լուծ-

**Արցախի պետական համալսարանի ուսանողները հաճախակի են առնչվում մայր բուհում գործող հրատարակչության հետ: Համալսարանն ունի փոքր, բայց նորագույն սարքավորումներով ապահովված հրատարակչություն: Այն ստեղծվել է 2001 թվականին: Նախքան հրատարակչության ստեղծումը՝ մայր բուհին վերաբերող բոլոր աշխատանքները տպագրվում էին Ստեփանակերտ քաղաքի տպարաններում («Դիզակ», «Սոնա», «Պոլիգրաֆ»):**

Հրատարակչության ստեղծման առաջին օրերից համապատասխան սարքավորումները չէին ապահովում ամբողջական աշխատանքը: Սակայն ժամանակի ընթացքում ձեռք բերվեցին անհրաժեշտ սարքավորում-

ներ, որոնք այսօր ամբողջովին լիարժեք են դարձրել հրատարակչության աշխատանքը: Այստեղ առկա են բոլոր այն տպագրական սարքավորումները, որոնցով կատարվում են տպագրում և պատճենահանում: Պետք է նշել, որ, համեմատած այլ հրատարակչությունների հետ, այստեղ, հատկապես ուսանողների համար, գնային տարբերությունը մեծ է՝ մատչելի լինելու առումով, տպագրումն ու պատճենահանումը կատարվում են սև և գունավոր եղանակներով, կրկնակի ցածր գներով:

Հրատարակչության տնօրեն Եղիշե Առուշանյանը նշում է, որ այստեղ գործող սարքավորումները ունեն մեծ առավելություններ, և կարող են կարճ ժամանակահատվածում ստանալ մեծ քանակությամբ տպագրված

ված չլինեն, կարելի է ընդամենը երկրորդական սարքավորումները փոխարինել նորով, իսկ եվրոպական ստանդարտներով կառուցվող գլխավոր մասնաշենքում այն կունենա ավելի ընդլայնված գործունեություն: Մեր գլխավոր նպատակը նոր շենք տեղափոխվելն ու նպաստավոր պայմաններ ստեղծելն է»:

ԱրՊՀ հրատարակչությունում են տպագրվում «Արցախի համալսարան» պաշտոնաթերթը, ուսանողական «Քո ժամանակը» թերթը, Գիտական տեղեկագիրը, դասախոսների ուսումնամեթոդական ձեռնարկները և այլ աշխատություններ, գրքեր:

Ահա այսպիսին է մայր բուհի հրատարակչական աշխարհը:

**Մոնիկա ՕՅԱՆՋԱՆՅԱՆ, Լրագրություն 1-ին կուրս**

# «ԼԻՆԵԼ ՄԱՆԿԱՎԱՐԺ, ՆՇԱՆԱԿՈՒՄ Ե ՍԻՐԵԼ ԱՌԱՋԻՆ ՀԵՐԹԻՆ ԵՐԵՒԱՆԵՐԻՆ»



Սեպտեմբերը նոր ուսումնական տարեկանի սկիզբն է, կրթական նոր դրոշմների ազդարարում ու մոնետիկը: Եվ շատ ուսանողների պես, սեպտեմբերի 1-ին նա յուրովի է մտնում իր գիտելիքներով հարուստ պտղուն այգին ու սկսում ուսանողական կյանքի նոր օրը: Խոստովանում է, թե ինչպես է առաջօր «խնամքով» հաշվել սեփական շտեմարանում ամբարած այն ցորեն-հատերը, յուրացրած գիտելիքի այն պաշարները, որոնք պարարտ հող են, հոգու սնունդ և անկարգելի հարստություն ապագա մանկավարժի երազանքների իրականացման համար: Մեր զրուցակիցն այս ամբամ մայր բուհի մանկավարժություն և մեթոդիկա մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողուհի էլիմար Գևորգյանն է:

Ելիմար, ասում են՝ ամենահիշարժան ու անփոխարինելի տարիները ուսանողականն են, որոնք և անջնջելի հետք են թողնում՝ ուսանողին նախապատրաստելով կյանքի տարբեր մարտահրավերների: Դու ի՞նչ կասես:

«Այո, միանշանակ ուսանողական տարիները իմ կյանքի կարևորագույն էջերից են, իսկ յուրաքանչյուրի կյանքում՝ գունավոր մի ծաղկուն փուլ: Դեռ 3-րդ կուրսում են, բայց կարծես մի ողջ ուսանողական կյանք են ապրել: Ես փորձում էի լինել ամենուրեք ու արտահամալսարանական եռուզեռում: Ես օգտվում էի ուսանողին ընծեռած գրեթե բոլոր հնարավորություններից և փորձում հնարավորինս հարստացնել իմ ուսանողական կյանքը բազմաթիվ երևույթներով ու իրադարձություններով: Այսօր էլ նույն ոգևորությամբ շարունակում են իրականացնել այն: Վերջին ամենաեռուն փուլը ամառային ծամբարն էր, որը կազմակերպվեց գեղատեսիլ Պատարայում, և որտեղ անփոխարինելի տպավորությունների, փորձի, գիտելիքների փոխանակման և սեփական ես-ի դրսևորման հետ մեկտեղ ուսանողը կարողացավ կոփել նաև իր միտքն ու երևակայությունը: Շատ հետաքրքիր էր, տպավորիչ ու հիշարժան: Իմ ուսանողական հիշողությունների պահոցում ավելացավ ևս մեկ տարբերվող շրջափուլ:

«Այսօր շատ ուսանողներ ուսումը համատեղում են աշխատանքի հետ: Քո մասնագիտական ուղղվածությունն այդ առումով առավել նպաստակա հարմար է: Փորձել ես իրագործել այն:

«Այո, ներս մտնել դասասենյակ՝ մեկ որպես ուսանող, մեկ էլ որպես ուսուցիչ: Երկու կարգավիճակ, երկուսն էլ միտված մանկավարժական անդուլ գործունեությանն ու

ծգոտումներին: Սիրում եմ մանկավարժի մասնագիտությունը: Այն ինձ համար նաև կենսակերպ է: Աշխատել եմ մանկապարտեզում: Մանկական աշխարհն ինձ համար մի այլ մոլորակ է: Լինել մանկավարժ, նշանակում է սիրել առաջին հերթին երեխաներին: Հուսով եմ, ավարտելուց հետո իմ գործունեության ոլորտն ավելի կընդլայնեն:

«Ի՞նչ է անհրաժեշտ ուսանողական կյանքը հետաքրքիր դարձնելու համար:

«Լուսավոր հոգի, արթուն միտք և պրպտուն ուղեղ: Դրանց համատեղ կիրառումը ոչ միայն ուսանողին, այլ յուրաքանչյուրին տալիս է բազմաբովանդակ կենսակերպ:

«Օգտվում եք լրացուցիչ էլեկտրոնային գրականությունից, թե՞ տրված դասախոսությունները բավական են տեսական ու գործնական գիտելիքների յուրացման համար:

«Տրված դասախոսությունները, նյութերը շատ նպատակահարմար են, բայց նախապես, հիմա ինՖորմացիոն քառս է համացանցում, և կարող ես անընդհատ տեղեկություններով և գիտելիքներով հագնալ: Բուհի գիտական ու էլեկտրոնային գրադարանն էլ խթանիչ աղբյուր է մեզ՝ ուսանողներիս համար: Այն արագորեն տեղի է ժամանակին օգնության է հասնում և ընդհանրացնում թեմայի լիարժեքությունը: Ես ինքս շատ եմ օգտվել և գրապահոցներից և առկա էլեկտրոնային դարաններից: Շատ գոհ եմ:

«Համայնքներում և գյուղերում մասնագիտական և կադրային անհրաժեշտության խնդիրն ավելի տեսանելի է, քան մայրաքաղաքում: Քո կարծիքով ո՞րն է պատճառը:

«Այո, այդ խնդիրը մշտապես նկատելի է առավելապես գյուղական համայնքներում: Կարծում եմ, յուրաքանչյուր գիտակից մտավորական, պետք է ավարտելուց հետո սեփական հողի կանչով միանա և շենացնի իր հող հայրենին: Ես արդեն մեծ սիրով աշխատել եմ գյուղում՝ որպես մանկավարժ և ավարտելուց հետո էլ սիրով կհամարեմ մեր շատ սիրելի մանկավարժների շարքերը: Ինչպես ասում են, երկրի ու ազգի շենացումը պետք է սկսել քո թփից, քո կտուրից ու քո հարկից, քո դպրոցից:

«Մանկավարժական գրականության պատմության մեջ ու՞մ գործերն են քեզ ներշնչում:

«Շատ կարևորում եմ Կոնստանտին Ուշինսկու դերակատարությունը, ով և եզակի ուշադրություն դարձնելով «Մանկական աշխարհին»՝ մանկավարժության տեսության անկյունաքար դարձրեց մայրենի լեզուն՝ որպես երեխայի մտավոր զարգացման բնական գործոն: Նրա բոլոր գործերը դաստիարակչական ուղեցույց են սկսնակ և առհասարակ մանկավարժների համար:

«Մանկավարժի ամենամեծ արժանիքը: «Ազնվություն, նրբանկատություն և մասնագիտական իմացություն:

**Հարցազրույցը՝ Անահիտ ՀԱՎՈՐՅԱՆԻ**